

Երեանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա: Զաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ եւ համեմատաբար խստաշունչ ձմեռ: Մայրաքաղաք Երեանը զբաղեցնում է 227.0 քվմ տարածք [2], վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի եւ Կոտայքի մարզերին: Երեանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավիթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Մայրաքաղաքի բնակչությունը 1 մլն 116 հազար է, որը Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 34.0%-ն է, իսկ Հայաստանի մարզերից օրական Երեան ժամանող եւ մեկնող քաղաքացիների թիվը կազմում է 400.0-450.0 հազար: Երեանը Հայաստանի տնտեսական, գիտական եւ մշակութային խոշորագույն կենտրոնն է, տարածաշրջանային փոխադրումների տրանսպորտային եւ տարանցիկ կարեւորագույն հանգույց: Հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչության 29.0%-ի պայմաններում (345.9 հազար մարդ) մայրաքաղաքի տնտեսարար կշիռը հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՋԱԿ) կառուցվածքում կազմում է շուրջ 52.0%, արտադրական հզորությունների գրեթե կեսը, շինարարության ոլորտի՝ 88.0%-ը, շահագործման հանձնված բնակելի տների 84.0%-ը, արդյունաբերության արտադրանքի 49.0%-ը, (այդ թվում՝ մշակող արդյունաբերության 61.0%-ը), մանրածախ ապրանքաշրջանառության 84.0%-ը, հանրային ծառայությունների ծավալի 91.0%-ը, այդ թվում՝ հյուրանոցների ծառայությունների 89.9%-ը, տրանսպորտի ծառայությունների 89.1%-ը, ֆինանսական գործունեության 97.0%-ը, անշարժ գույքի հետ կապված գործառնությունների 87.0%-ը, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ծառայությունների 99.0%-ը, արտահանման 52.0%-ը, ներմուծման 82.0%-ը:

2009թ. եւ 2010թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տնտեսարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում ներկայացված են աղյուսակ 1-ում:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ՝ Երեան քաղաքում աշխատանքային ռեսուրսները կազմել են 719.0 հազ., որից տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ 338.8 հազ., որը նախորդ տարվա համեմատ նվազել է 2.05%-ով: Չբաղվածների թիվը կազմել է 316.1 հազ. (-3.62%), իսկ գործազուրկների՝ 22.7 հազ. (26.1%): Երեանում հաշվառված են շուրջ 179 հազ. կենսաթոշակառու, որն ընդհանուրի 34.2%-ն է, եւ 21.9 հազ. նպաստառու ընտանիքներ (17,78%):

Ըստ վարչական շրջանների՝ Երեանում տարածքի եւ բնակչության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Երեանը հարուստ է պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով եւ թանգարաններով: Այստեղ հաշվառված է պատմության եւ մշակույթի 401 հուշարձան, որից 288-ը՝ պետական սեփականության, իսկ 113-ը՝ Երեանի հա-

Աղյուսակ 1.

**Երեանի տնտեսության հիմնական հատվածների տնտեսարար կշիռները ՀՀ-ում (%)**

	2009թ.	2010թ.
Արդյունաբերություն	49.0	45.3
Շինարարություն	87.6	68.5
Մանրածախ առևտուր	84.5	81.7
Ծառայություններ	90.9	86.6
Հիմնական միջոցների գործարկում	89.0	84.0
Շահագործման հանձնված բնակելի շենքեր	84.0	84.0

Աղյուսակ 2.

**Երեան համայնքի վարչական շրջանների տարածքը եւ բնակչությունը (2010թ. հունվարի 1-ի դրությամբ) [(1)]**

	Տարածքը (հա)	Երևանի տարածքում վարչական շրջանի տնտեսարար կշիռը (%)	Բնակչության թիվը (հազ.)	Երևանի բնակչության թվում տնտեսարար կշիռը (%)
ք. Երևան	22700	-	1116.6	-
Աջափնյակ	2606	11.5	108.0	9.67
Ավան	808	3.6	50.3	4.55
Արաբկիր	1320	5.8	131.0	11.73
Դավիթաշեն	654	2.9	41.0	3.67
Էրեբունի	4880	21.5	121.5	10.88
Կենտրոն	1339	5.9	130.4	11.67
Մալաթիա-Սեբաստիա	2539	11.2	141.5	12.68
Նոր Նորք	1440	6.3	146.4	13.12
Նորք-Մարաշ	470	2.1	11.3	1.02
Նուբարաշեն	1731	7.6	9.6	0.86
Շենգավիթ	4099	18.1	145.9	13.07
Քանաքեռ-Զեյթուն	775	3.4	79.1	7.08

մայրաքաղաքի սեփականության: Երեանի 57 թանգարաններից 4-ը Երեանի քաղաքապետարանի ենթակայության են: Երեանի սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման ասպարեզում զգալի նշանակություն ունի նաեւ այն հանգամանքը, որ այստեղ են գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Հանրապետության Ազգային ժողովն ու կառավարությունը, բոլոր նախարարությունները եւ պետական կառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, զանգվածային տեղեկատվության միջոցների գերակշիռ մասը: Զաղաքում են գործում Գիտությունների ազգային ակադեմիան եւ Երեանի եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, գիտական տասնյակ հաստատություններ,

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԶՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ** ՀՏԴ 351/354 : 31

**Միքայել ՍԱՀԱԿՅԱՆ**



շուրջ 70 համալսարաններ եւ ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոններ ու մոտ 60 թանգարան, համերգատարաններ, մարզական կենտրոններ, 21 եկեղեցի: Մայրաքաղաքում են գտնվում օտարերկրյա պետությունների 25 դեսպանատներ եւ 21 հյուպատոսություններ, արտերկրյա ֆինանսական, հասարակական եւ մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերը, ֆինանսական հաստատությունները:

Այսօր Երեւանում ստեղծված է Սփյուռքի ներուժի ներգրավման, զբոսաշրջության խթանման, ներդրումային եւ գործարար բարենպաստ միջավայր, իսկ Հայաստան տարեկան ժամանող շուրջ կես միլիոն զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երեւանը դարձել է հիմնական հանգրվան:

Հաշվի առնելով վերը նշված ցուցանիշները՝ պարզ է դառնում, որ Երեւանը ամենամեծ եւ տնտեսապես ամենահզոր համայնքն է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այս

համատեքստում կարելի է արձանագրել՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո [3], փաստացի, տասներկու համեմատաբար փոքր համայնքների միավորման արդյունքում ձեւավորված համայնքի մոդելը արդարացված է՝ կառավարման, ֆինանսական հոսքերի ծրագրավորման եւ սոցիալ-տնտեսական զարգացման շրջանակներում:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետությունը եւ մարզերը թվերով, փճակագրական ժողովածու, 2010, էջ 212-219
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 11-12
3. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Երեւան 2009

2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը [1] ամբողջովին փոխեց Երեւանի կարգավիճակը. 12 առանձին համայնքներ կենտրոնացան մեկ՝ Երեւան համայնքի մեջ: Սա նոր մտտեցում էր ու թերեւս առաջին փորձը Հայաստանի նորակախի Հանրապետությունում համայնքների խոշորացման շրջանակներում, ինչը բարձրացնում է կառավարման արդյունավետության մակարդակը, միասնական բյուջեի պարագայում դյուրացնում ծրագրավորումը եւ քաղաքի տեսլականի պատկերացման հաստատումից հետո դրա համար կատարվող համապատասխան միջոցառումների իրականացումը: Իհարկե՝ Երեւանի ավագանին համարվում է Երեւանի տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմինը, որը վերահսկողություն է իրականացնում Երեւանի քաղաքապետի գործունեության նկատմամբ, ով, ի դեպ, եւս համարվում է նույն ավագանու անդամ, սակայն Երեւանի քաղաքապետի դերակատարումը կառավարման գործընթացում բացառիկ է: Նա համարվում է տեղական ինքնակառավարման մարմին, ներկայացնում է Երեւանը՝ որպես համայնք, ավագանին եւ քաղաքապետարանը՝ այլ անձանց ու մարմինների հետ հարաբերություններում. ղեկավարում է քաղաքապետարանի աշխատանքները եւ, ինչպես նշեցինք, համարվում է ավագանու անդամ:

Քաղաքապետի լիազորությունների ընդհանուր բնութագիրը տրվում է «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածում, մասնավորապես.

● Քաղաքապետն իրականացնում է հետեւյալ պարտադիր լիազորությունները.

✓ կազմակերպում է ավագանու եւ քաղաքապետարանի աշխատանքները,

✓ իր իրավասության սահմաններում ձեռնարկում է բնակիչների իրավունքներն ու ազատությունները ապահովելու միջոցներ,

✓ օրենքով սահմանված կարգով նշանակում եւ ազատում է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին,

✓ սահմանում է Երեւանի շենքերի եւ շինությունների համարակալումը,

✓ ավագանու եւ ներկայացնում է Երեւանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու եւ օտարելու

տարեկան ծրագիրը, դրան համապատասխան՝ տնօրինում է Երեւանի սեփականություն համարվող գույքը,

✓ պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է քաղաքային կազմակերպությունների ղեկավարներին,

✓ նշանակում եւ ազատում է վարչական շրջանի ղեկավարներին,

✓ սահմանում է վարչական շրջանի ղեկավարի նստավայրը, օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն եւ սեփական պատասխանատվությամբ կազմակերպում ու ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը,

✓ ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը՝ ավագանու, իր գործունեության ու Երեւանի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակի մասին, այդ հաշվետվությունները տեղադրվում են Երեւանի համացանցային պաշտոնական կայքում,

✓ վերահսկողություն է իրականացնում վարչական շրջանի ղեկավարի գործունեության նկատմամբ եւ պատասխանատու է նրանց լիազորությունների պատշաճ իրականացման համար,

✓ իրականացնում է Երեւանի սեփականություն համարվող ենթակառուցվածքների կառավարումը եւ ապահովում դրանց շահագործումը,

✓ խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին,

✓ ավագանու եւ ներկայացնում առաջարկ՝ վարչական շրջանի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների քանակի, անվանումների, ձեւավորման եւ գործունեության կարգի ու լիազորությունների վերաբերյալ,

✓ բացառապես սույն օրենքով սահմանված պարտադիր այլ իրավասություններ:

● Քաղաքապետն իրականացնում է հետեւյալ պատվիրակված լիազորությունները.

✓ օրենքով սահմանված կարգով լուծում է Երեւանի տարածքում հավաքներ անցկացնելու հարցը,

✓ օրենքով Երեւանի քաղաքապետի համար պատվիրակված այլ լիազորություններ:

● Երեւանում տեղական ինքնակառավարումն արդյունա-

## ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱԲԱՊԵՏԻ՝

ՀՏԴ 351/354 : 338 (479.25)

# ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

Միքայել  
ՍԱՀԱԿՅԱՆ